ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РА
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և դատավարության

Հեղինակ՝ իր.գ. դ., պրոֆեսոր Ծաղիկյան Ս.Շ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քրեաբանություն

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՈՏԱՑԻԱՆ

1.1. Սույն դասընթացի համառոտ նկարագրությունը

Քրեաբանությունը (կիրմինալոգիան) բովանդակային առումով անկախ, ընդհանուր տեսական գիտություն է հանցավորության, դրա առաջացման պատճառների և դրան նպաստող պայմանների, հանցագործություն կատարած անձանց, ինչպես նաև հանցագործության կանխարգելման մեթոդների և միջոցների մասին: Սույն դասընթացի ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևավորել գիտականորեն հիմնավորված մոտեցում հանցավորության հիմնախնդիրների նկատմամբ: Բացի այդ, իրավաբանների քրեաբանական պատրաստությունը զարգացնում է հանցագործությունների մասին տեղեկատվության վերլուծության, կոնկրետ տարածքում քրեաբանական իրավիճակը գնահատելու, հանցագործությունների կանխարգելման տարբեր սուբյեկտների փոխգործակցությունը կազմակերպելու, դրա արդյունքները գրանցելու և գնահատելու հմտություններ:

1.2. Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Քրեաբանության դասընթացի ծավալը կազմում է 2 ակադեմիական կրեդիտ, 72 ակադեմիական ժամ: Այն նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Որպես դասընթացի ամփոփիչ ստուգման ձև սահմանված է ստուգարքը:

1.3. Դասընթացի փոխկապակցությունը «իրավագիտության բակալավր» մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Քրեաբանությունն օրգանապես կապված է քրեաիրավական ոլորտն ընդգրկող այնպիսի գիտությունների հետ, ինչպիսիք են՝ քրեական իրավունքը, քրեական դատավարությունը, քրեակատարողական իրավունքը, քրեագիտությունը և այլն, որոնք նույնպես ուսումնասիրում են հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները: Ընդ որում, թվարկված մյուս առարկաների նկատմամբ քրեական իրավունքը կատարում է մեթոդաբանական գործառույթ, քանի որ տալիս է հանցավորության՝ որպես սոցիալ-իրավական երևույթի, հասկացությունը: Քրեաբանության յուրացումը որոշ դեպքերում ենթադրում է իրավունքի այլ ճյուղերի և կոնկրետ նորմատիվ աղբյուրների իմացություն: Ուստի ուսանողը պետք է խորապես ուսումնասիրի դրանց դրույթները՝ քրեաբանության էությունն ըմբռնելու համար:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Դասընթացի նպատակներն ու խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողների մեջ զարգացնել մասնագիտական խորը գիտելիքներ հանցավորության, հանցագործության կատարման պատճառների և պայմանների, հանցագործության կանխարգելմանն ուղղված միջոցառումների մասին, ձեռք բերել հմտություններ՝ համապատասխան գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով:

Ուսումնական դասընթացի հիմնական նպատակներն են՝ ուսանողներին ծանոթացնել քրեաբանության առարկային և մեթոդին, քրեաբանության ձևավորման և զարգացման պատմությանը, շեղվող վարքագծի քրեականացման պատճառներին, հանցավորության պատճառների և պայմանների տեսություններին, հանցագործությունների կանխարգելման մեթոդներին, ուսանողների մոտ ձևավորել հմտություններ՝ համապատասխան գիտելիքները գործնականում կիրառելու, ինչպես նաև ապագա իրավաբանին անհրաժեշտ մասնագիտական կարողություններ՝

ինքնուրույն կերպով օրինաստեղծ, իրավակիրառ և իրավապահ գործունեություն իրականացնելու համար:

2.2. Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները, հմտությունները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքում շրջանավարտը պետք է ունենա.

2.2.1. ***Գիտելիք և իմացություն՝***

- Քրեաբանության ուսումնասիրման առարկայի, նպատակների, խնդիրների և այլ գիտությունների հետ փոխկապակցվածության վերաբերյալ,
- Քրեաբանության պատմության, քրեաբանական առավել տարածված տեսությունների վերաբերյալ,
- Հանցավորության՝ որպես սոցիալական երևույթի, դրա քանակական և որակական հիմնական բնութագրերի, դրսևորումների վերաբերյալ,
- Հանցագործի անձի սոցիալ-ժողովրդագրական, բարոյա-հոգեբանական, քրեա-իրավական բնութագրերի, տիպաբանության վերաբերյալ,
- Հանցավորության դետերմինանտների, դրանց դասակարգման վերաբերյալ,
- Անձի կողմից կոնկրետ հանցագործության կատարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմի վերաբերյալ,
- Հանցագործությունների նախականխման, դրա տեսակների և համակարգի վերաբերյալ,
- Վիկտիմաբանական կանխարգելման առանձնահատկությունների վերաբերյալ,
- Կոնկրետ հանցատեսակների քրեաբանական բնութագրերի, դրանց կատարման պատճառների, նպաստող պայմանների և նախականխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

2.2.2. ***Հմտություններ***, այդ թվում.

ա/ *<u>ստացած գիտելիքները կիրառելու ոլորտում՝</u>*

◆ Հանցավորության շարժընթացը, կառուցվածքը մեկնաբանելու ունակություն,

◆ Հանցավորության մակարդակը, գործակիցը հաշվարկելու ունակություն,

◆ Ընդհանուր հանցավորության, դրա առանձին տեսակների զարգացման օրինաչափությունները բացահայտելու ունակություն,

◆ Հանցագործություն կատարած անձանց սոցիալ-ժողովրդագրական, բարոյա-հոգեբանական, քրեաիրավական առանձնահատկությունների վերլուծության ունակություն,

◆ Անձի կողմից կոնկրետ հանցագործության կատարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմի պարզման ունակություն,

◆ Ընդհանուր հանցավորության, դրա առանձին տեսակներ ծնող պատճառների և նպաստող պայմանների պարզաբանման ունակություն,

◆ Ընդհանուր հանցավորության, դրա առանձին տեսակներ ծնող պատճառների և նպաստող պայմանների ուղղությամբ առաջարկների մշակման ունակություն:

բ/ *<u>հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու ոլորտում՝</u>*

➢ Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը քրեաբանության հիմնախնդիրներին վերաբերող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, խնդիրներ և լուծումներ ներկայացնելու ունակություն,

➢ Քրեաբանական վերլուծություններ կատարելու նպատակով ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ կիրառելու ունակություն,

➢ Քրեաբանական հիմնախնդիրներին վերաբերող քանակական և որակական տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու ունակություն,

➢ Մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների պահպանման, կոռուպցիոն վարքագծի բացառման ունակություն:

գ/ *<u>ընդհանրական իմացական (ներառյալ դատողություններանելու) ոլորտում՝</u>*

✓ Քրեաբանական խնդիրները վեր հանելու և դրանց լուծման ուղիները մշակելու ուղղությամբ փաստարկված վերլուծական մոտեցման ունակություն,

✓ Քրեաբանական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականության և ստեղծագործական մոտեցման ցուցաբերման ունակություն:

2.2.3. ***Կարողություններ***, այդ թվում ինքնուրույնության և պատասխանատվության դրսևորման ոլորտում՝

✧ Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո լիարժեք քրեաբանական գործունեություն ծավալելու կարողություն,

✧ Քրեածին իրավիճակի, հանցավորության դեմ պայքարի միջազգային փորձի պարբերաբար ուսումնասիրման կարողություն,

✧ Ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում առաջադրանքներ կատարելու, անհրաժեշտ ինքնուրույնություն ցուցաբերելու և մասնագիտական որոշումներ կայացնելիս պատասխանատվություն ստանձնելու կարողություն,

✧ Թիմային աշխատանք կատարելու կարողություն,

✧ Իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանն անձնական օրինակով նպաստելու կարողություն,

✧ Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու կարողություն:

2.3. Դասընթացի աշխատատարությունը (ակադեմիական ժամ) և ուսումնական աշխատանքի տեսակները

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 4-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունը (ակադեմիական ժամ), այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**34**
1.1.1.Դասախոսություններ	**18**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**38**
1.2.1. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**38**
1.2.1.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**19**
1.2.1.2.Էսսե և ռեֆերատներ	**19**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

2.4. Դասընթացի թեմատիկ պլանը և լսարանային ժամերի աշխատատարությունը

Առարկայի թեմաները	Ընդամենը (ակ. ժամ)	Դասա-խոսութ. (ակ. ժամ)	Գործն. պարապմ. (ակ. ժամ)
1	*2*	*3*	*4*
Թեմա 1.Քրեաբանությունը՝ որպես գիտություն, նրա առարկան, մեթոդաբանությունը և տեղը այլ գիտությունների շարքում	**2**	**1**	**1**
Թեմա 2. Քրեաբանության պատմությունը, քրեաբանական առավել տարածված տեսությունները	**4**	**2**	**2**
Թեմա 3. Հանցավորությունը և դրա հիմնական բնութագրերը	**2**	**1**	**1**
Թեմա 4. Հանցագործի անձը	**2**	**1**	**1**
Թեմա 5. Հանցավորության պատճառներն ու դրան նպաստող պայմանները	**3**	**2**	**1**

Թեմա 6. Հանցավորության նախականխումը	2	1	1
Թեմա 7. Բռնությամբ կատարվող հանցագործությունները և դրանց նախականխումը	2	1	1
Թեմա 8. Հասարակական կարգի ու անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները և դրանց նախականխումը	2	1	1
Թեմա 9. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները և դրանց նախականխումը	2	1	1
Թեմա 10. Կոռուպցիոն հանցագործությունները և դրանց նախականխումը	2	1	1
Թեմա 11. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում կատարվող հանցագործությունները և դրանց նախականխումը	2	1	1
Թեմա 12. Անչափահասների հանցավորությունը և դրա նախականխումը	2	1	1
Թեմա 13. Կանանց հանցավորությունը և դրա նախականխումը	1	1	
Թեմա 14. Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորությունը և դրա նախականխումը	2	1	1
Թեմա 15. Կազմակերպված հանցավորությունը և դրա նախականխումը	2	1	1
Թեմա 16. Անզգուշությամբ կատարվող հանցագործությունները և դրանց նախականխումը	2	1	1
Ընդամենը	**34**	**18**	**16**

2.5. Դասընթացի թեմաների համառոտ բովանդակությունը

Թեմա 1.Քրեաբանությունը՝ որպես գիտություն, նրա առարկան, մեթոդաբանությունը և տեղը այլ գիտությունների շարքում

1.1.Քրեաբանության հասկացությունը և առարկան

1.2.Քրեաբանության գիտության նպատակները, խնդիրները, գործառույթները

1.3.Քրեաբանության գիտության մեթոդաբանությունը

1.4.Քրեաբանության տեղն այլ գիտությունների շարքում

Թեմա 2. Քրեաբանության պատմությունը, քրեաբանական առավել տարածված տեսությունները

2.1. Քրեաբանության զարգացման փուլերը

2.2. Քրեական իրավունքի դասական դպրոցի քրեաբանական գաղափարները

2.3. Պոզիտիվիզմը քրեաբանությունում: Կենսաբանական տեսությունը որպես պոզիտիվիզմի առաջին դրսևորում

2.4. Քրեաբանության զարգացման սոցիոլոգիական ուղղությունը որպես պոզիտիվիզմի դրսևորում

2.5. Պլյուրալիզմը քրեաբանության հետագա զարգացման ընթացքում

2.6. Հայրենական քրեաբանության զարգացումը

Թեմա 3. Հանցավորությունը և դրա հիմնական բնութագրերը

3.1. Հանցավորության հասկացությունը և դրա հատկանիշները

3.2. Հանցավորության հիմնական քանակական և որակական բնութագրերը

3.3. Քողարկված (լատենտային) հանցավորությունը, պատճառները և հայտնաբերման մեթոդները

Թեմա 4. Հանցագործի անձը

4.1. Հանցագործի անձի հասկացությունը

4.2. Հանցագործի անձի սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը

4.3. Հանցագործի անձի բարոյա-հոգեբանական բնութագիրը

4.4. Հանցագործի անձի քրեաիրավական բնութագիրը

4.5. Հանցագործի անձի տիպաբանությունը

Թեմա 5. Հանցավորության պատճառներն ու դրան նպաստող պայմանները

5.1. Հանցավորության գործոնների, պատճառների ու պայմանների հասկացությունը քրեաբանությունում

5.2. Հանցավորության դետերմինանտների դասակարգումը

5.3. Կոնկրետ հանցագործության կատարման պատճառները, պայմանները և սոցիալ-հոգեբանական մեխանիզմը

Թեմա 6. Հանցավորության նախականխումը

6.1. Հանցավորության նախականխման հասկացությունը, նպատակները և համակարգը

6.2. Հանցավորության նախականխման տեսակները

6.3. Վիկտիմաբանական կանխարգելման էությունը, հիմնական ուղղությունները

Թեմա 7. Բռնությամբ կատարվող հանցագործությունները և դրանց նախականխումը

7.1. Բռնությամբ կատարվող հանցագործությունների հասկացությունը և քրեաբանական ընդհանուր բնութագիրը

7.2. Բռնության գործադրմամբ հանցագործություն կատարող անձանց քրեաբանական բնութագիրը

7.3. Բռնությամբ կատարվող հանցագործությունների հիմնական քրեաբանական դետերմինանտներ

7.4. Բռնությամբ կատարվող հանցագործությունների ընդհանուր սոցիալական և հատուկ քրեաբանական նախականխման հիմնական ուղղությունները

Թեմա 8. Հասարակական կարգի ու անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները և դրանց նախականխումը

8.1. Հասարակական կարգի ու անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը և քրեաբանական բնութագիրը

8.2. Ահաբեկչության, զենքի ապօրինի շրջանառության, խուլիգանության, բնապահպանական հանցագործություններ կատարող անձանց քրեաբանական բնութագիրը

8.3. Ահաբեկչության, զենքի ապօրինի շրջանառության, խուլիգանության, բնապահպանական հանցագործությունների հիմնական քրեաբանական դետերմինանտները

8.4. Ահաբեկչության, զենքի ապօրինի շրջանառության, խուլիգանության, բնապահպանական հանցագործությունների ընդհանուր սոցիալական և հատուկ քրեաբանական նախականխման հիմնական ուղղությունները

Թեմա 9. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները և դրանց նախականխումը

9.1. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների հասկացությունը, վիճակը, շարժընթացը և կառուցվածքը

9.2. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ կատարող անձանց քրեաբանական բնութագիրը

9.3. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների պատճառներն ու պայմանները

9.4. Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների նախականխումը

Թեմա 10. Կոռուպցիոն հանցագործությունները և դրանց նախականխումը

10.1. Կոռուպցիայի հասկացությունը և քրեաբանական բնութագիրը

10.2. Կոռուպցիոն հանցագործություններ կատարող անձանց քրեաբանական բնութագիրը

10.3. Կոռուպցիոն հանցագործությունների պատճառներն ու պայմանները

10.4. Կոռուպցիոն հանցագործությունների նախականխումը

Թեմա 11. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում կատարվող հանցագործությունները և դրանց նախականխումը

11.1. Թմրահանցավորության հասկացությունը, դրսևորումները և քրեաբանական բնութագիրը

11.2. Թմրահանցավորության սուբյեկտների անձի քրեաբանական բնութագրի առանձնահատկությունները և նրանց տիպաբանությունը

11.3. Թմրահանցավորության պատճառներն ու պայմանները

11.4. Թմրահանցավորության նախականխումը

Թեմա 12. Անչափահասների հանցավորությունը և դրա նախականխումը

12.1. Անչափահասների հանցավորության հասկացությունը, քրեաբանական առանձնահատկությունները

12.2. Անչափահաս հանցագործի անձի քրեաբանական առանձնահատկությունները

12.3. Անչափահասների հանցավորության պատճառներն ու պայմանները

12.4. Անչափահասների հանցավորության նախականխումը

Թեմա 13. Կանանց հանցավորությունը և դրա նախականխումը

13.1. Կանանց հանցավորության հասկացությունը և քրեաբանական բնութագիրը

13.2. Կանանց հանցավորության պատճառներն ու պայմանները

13.3. Կանանց հանցավորության նախականխումը

Թեմա 14. Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորությունը և դրա նախականխումը

14.1. Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորության հասկացությունը, դրանց հատկանիշները

14.2. Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորության քրեաբանական բնութագրերը

14.3. Ռեցիդիվիստի և պրոֆեսիոնալ հանցագործի անձերը

14.4. Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորության պատճառներն ու պայմանները

14.5. Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորության նախականխումը

Թեմա 15. Կազմակերպված հանցավորությունը և դրա նախականխումը

15.1. Կազմակերպված հանցավորության հասկացությունը, հիմնական նշանները և քրեաբանական բնութագիրը

15.2. Կազմակերպված հանցավոր կառույցներում ընգրկված անձնաց տիպաբանությունը, նրանց քրեաբանական բնութագիրը

15.3. Կազմակերպված հանցավորության պատճառներն ու պայմանները

15.4. Կազմակերպված հանցավորության նախականխման հիմնական ուղղությունները

Թեմա 16. Անզգուշությամբ կատարվող հանցագործությունները և դրանց նախականխումը

16.1. Անզգուշությամբ կատարվող հանցագործությունների հասկացությունը, տեսակները և քրեաբանական բնութագիրը

16.2. Անզգույշ հանցագործություններ կատարող անձանց քրեաբանական բնութագիրը

16.3. Անզգուշությամբ կատարվող հանցագործությունների պատճառներն ու պայմանները

16.4. Անզգույշ հանցագործությունների ընդհանուր և հատուկ կանխարգելումը

2.6. Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

2.6.1. Դասագրքեր

- ✓ Джозеф Ф. Шели. Криминология. 3-е международное издание. - М., 2003.
- ✓ Криминология: Учебник /Под ред. Н.Ф. Кузнецовой, В.В. Лунеева. - М.: Волтерс Клувер, 2004.
- ✓ Криминология: Учебник /Под ред. Г.А. Аванесова. - М.: Юнити-Дана, 2005.
- ✓ Криминология: Учебник / Под ред. В.Д. Малкова. 3-е изд., перераб. и доп - М.: Юстицинформ, 2008.
- ✓ Криминология: Учебник для вузов / под ред. проф. В.Д. Малкова — 27е изд., перераб. и доп. — М.: ЗАО «Юстицинформ», 2006. — 528 с.
- ✓ Антонян Ю. М. Криминология: учебник. - 2-е изд., перераб. и доп. - М.: Юрайт, 2012.
- ✓ - 523 с.
- ✓ Криминология: Общая часть: учебник / под общей редакцией Ф.К. Зиннурова. – Казань: КЮИ МВД России, 2019. – 358 с.
- ✓ Криминология : учебник / под общ. ред. А.И. Долговой. – 4-е изд., перераб. и доп. – Москва: Норма: ИНФРА-М, 2020. – 1008 с. https://znanium.ru/read?id=365147
- ✓ Криминология : учебник / под ред. В.Н. Кудрявцева и В.Е. Эминова. – 5-е изд., перераб. и доп. – Москва: Норма: ИНФРА-М, 2022. 800с. https://znanium.ru/read?id=396106
- ✓ Криминология : учебник для вузов / В.П. Ревин, В.Д. Малков, В.В. Ревина, Ю.С. Жариков. – 3-е изд., перераб. и доп. – Москва: Издательство Юрайт, 2023. 178 с.
- ✓ Криминология : учебник для вузов / О. С. Капинус [и др.] ; под общей редакцией О. С. Капинус. — 2-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024. — 1132 с.
- ✓ Криминология : учебник и практикум для вузов / О. Р. Афанасьева, М. В. Гончарова, В. И. Шиян. — 2-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2024. — 356 с.

2.6.2. Ուսումնական ձեռնարկներ

- ✓ Иншаков С.М. Зарубежная криминология / С.М. Иншаков. - М. : Изд. группа ИНФРА.М-НОРМА, 1997. - 374 с.
- ✓ Криминология: Учебно-методические материалы / Под ред. д.ю.н., профессора С.Я. Лебедева. М, 2007.
- ✓ Криминология: учеб. пособие / С. В. Шевелева, А. А. Гребеньков;В. Е. Новичков; Отв. ред. А. А. Гребеньков; Юго-Зап. гос. ун-т. Курск, 2011. 298 с.;
- ✓ Криминология и профилактика преступлений / Под ред. г А Аванесова. - М., 2014.
- ✓ Криминология: общая часть: учебное пособие / Е. А. Алексеева, Р. С. Абдулин – Курган : Изд-во Курганского гос. ун-та, 2019. – 148 с.
- ✓ Савельева, О.Ю. Криминология: электронное учеб.-метод. пособие / О.Ю. Савельева. – Тольятти: Изд-во ТГУ, 2019. – 1 оптический диск.

2.6.3. Լեկցիաների կուրս

- ✓ Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. — М.: «Логос», 2004. – 448 с.
- ✓ Криминология: Курс лекций / Под ред. А.И. Алексеева. -М., 2005.